ՀՀ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶ
ՎԱՂԱՐՇԱՊԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

ՈՐՈՇՈՒՄ ԹԻՎ 1374Կ

23 դեկտեմբերի 2024թ. ք. Էջմիածին

ԻՆՔՆԱԿԱՄ ԿԱՌՈՒՑՎԱԾ ԱՎՏՈՏՆԱԿԸ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՄԱՐԵԼՈՒ ԵՎ ՕՐԻՆԱԿԱՆԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով « ՀՀ քաղաքացիական օրենսգրքում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին » 24.12.2021թ. ՀՕ-397-Ն օրենքի 2-րդ հոդվածով, «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 22-րդ և 24-րդ կետերի, 57-րդ հոդվածի 2-րդ մասով, ՀՀ կառավարության 18.05.2006թ. թիվ 731-Ն և 912-Ն որոշումների պահանջներով, հիմք ընդունելով Կաղաստրի կոմիտեում հաշվառման ծածկագիրը՝ 2023B7JPM8 և «Ավագ Ավագյան» ԱՁ-ի / որակավորման վկայական թիվ 0331/ կողմից 11.07.2023թ. կազմված հատակագիծը.

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ

1. Վաղարշապատ համայնքի Էջմիածին քաղաքի Սուրբ Մեսրոպ Մաշտոցի փողոցում գտնվող, համայնքային սեփականություն հանդիսացող 0.00242հա մակերեսով բնակավայրերի նպատակային նշանակության, բնակելի կառուցապատման գործառնական նշանակության հողամասում ինքնակամ կառուցված 24.2քմ / 24.2քմ արտաքին և 20քմ ներքին / մակերեսով ավտոտնակը համարել Վաղարշապատ համայնքի սեփականություն: Կառույցի պահպանումը չի խախտում այլ անձանց իրավունքներն ու օրենքով պահպանվող շահերը, վտանգ չի սպառնում քաղաքացիների կյանքին ու առողջությանը, նրա զբաղեցրած հողամասը չի ընդգրկվում ՀՀ հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված հողամասերի ցանկում, կառուցված չէ ինժիներատրանսպորտային օբյեկտների օտարման և անվտանգության գոտիներում, կառուցված չէ քաղաքաշինական նորմերի ու կանոնների էական խախտումներով և չի առաջացնում հարկադիր սերվիտուտ պահանջելու իրավունք, համապատասխանում է համայնքային նշանակության քաղաքաշինական համալիր ծրագրերին:
2. Օրինականացնել Վաղարշապատ համայնքի Էջմիածին քաղաքի Սուրբ Մեսրոպ Մաշտոցի փողոցում գտնվող, համայնքային սեփականություն հանդիսացող 0.00242հա մակերեսով բնակավայրերի նպատակային նշանակության, բնակելի կառուցապատման գործառնական նշանակության հողամասում, ինքնակամ կառուցված 24.2քմ / 24.2քմ արտաքին և 20քմ ներքին/ մակերեսով ավտոտնակը:
3. Վաղարշապատ համայնքի Էջմիածին քաղաքի Սուրբ Մեսրոպ Մաշտոցի փողոցում գտնվող 24.2քմ / 24.2քմ արտաքին և 20քմ ներքին / մակերեսով ավտոտնակը և դրա պահպանման ու սպասարկման համար զբաղեցրած 0.00242հա մակերեսով բնակավայրերի նպատակային նշանակության, բնակելի կառուցապատման գործառնական նշանակության հողամասը առաջարկել գնման նախապատվության իրավունքով /ուղղակի վաճառք/ գնել կառույցն իրականացնող անձին՝ Արմինե Գառնիկի Թաթոյանին:
4. Սույն որոշումից ծագող իրավունքները ենթակա են պետական գրանցման:
5. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունմանը հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻՆ

ՓՈԽԱՐԻՆՈՂ, ԱՌԱՋԻՆ ՏԵՂԱԿԱԼ Ա.ՊԵՏՐՈՍՅԱՆ

ՀՀ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶ
ՎԱՂԱՐՇԱՊԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

ՈՐՈՇՈՒՄ ԹԻՎ 1372-Ա

23 օգոստոս 2024թ. ք. Էջմիածին

ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻՆ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 22-րդ և 24-րդ կետերով, 57-րդ հոդվածի 2-րդ մասի, ՀՀ Կառավարության 14.07.2005թ. թիվ 1109-Ն որոշման, ՀՀ Կառավարության 18.05.2006թ. թիվ 912-Ն որոշման և ՀՀ Կառավարության 29.12.2005թ. թիվ 2387-Ն որոշման պահանջներով և հիմք ընդունելով «Ավագ Ավագյան» ԱՁ-ի / որակավորման վկայական թիվ 0331 / կողմից 11 .07.2023թ. կազմված հատակագիծը և Կադաստրի կոմիտեի կողմից հաստատված հայտի քաղվածքի ծածկագիրը՝ 04011UJRLDQK.

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ

1. Վաղարշապատ համայնքի սեփականություն հանդիսացող Էջմիածին քաղաքի Սուրբ Մեսրոպ Մաշտոցի փողոցում գտնվող ավտոտնակին և դրա պահպանման ու սպասարկման համար զբաղեցրած 0.00242հա մակերեսով բնակավայրերի նպատակային նշանակության, բնակելի կառուցապատման գործառնական նշանակության հողամասին տրամադրել հասցե՝ Վաղարշապատ համայնք ք. Էջմիածին, Սուրբ Մեսրոպ Մաշտոցի փողոց թիվ 67/9 ավտոտնակ:
2. Սույն որոշումից ծագող իրավունքները ենթակա են պետական գրանցման:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունմանը հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻՆ
ՓՈԽԱՐԻՆՈՂ, ԱՌԱՋԻՆ ՏԵՂԱԿԱԼ Ա.ՊԵՏՐՈՍՅԱՆ

ՀՀ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶ
ՎԱՂԱՐՇԱՊԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

ՈՐՈՇՈՒՄ ԹԻՎ 13734

23 դեկտեմբեր 2024թ. ք.Էջմիածին

ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻ ԲԱԺԱՆՄԱՆ ԵՎ ՀԱՍՑԵԱՎՈՐՄԱՆ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 22-րդ և 24-րդ կետերով, 57-րդ հոդվածի 2-րդ մասով, ՀՀ Կառավարության 29.12.2005թ. թիվ 2387–Ն որոշման պահանջներով և քննարկելով Վաղարշապատ համայնքի Էջմիածին քաղաքի, Ա. Բաբաջանյան /նախկին Զվարթնոց թաղամասի Մ. Մաշտոց/ փողոցի թիվ 24 տան բնակիչ՝ Անդրանիկ Արտավազդի Ավագյանի դիմումը իրեն, Գոհար Արտավազդի Ավագյանին, Վարդան Արտավազդի Ավագյանին պատկանող անշարժ գույքը բաժանելու մասին /հիմք՝ անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման վկայական թիվ 17072024-04-0025 տրված՝ 17.07.2024թ., «Ավագ Ավագյան Գագիկի» ԱՁ-ի /որակավորման վկայական թիվ 0331/ կողմից 31.07.2024թ. կազմված հատակագիծ և կադաստրի կոմիտեի կողմից հաստատված հասցեի հայտի քաղվածքի ծածկագրեր՝ 040119AQZUVL, 04011MVH94HA/.

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ

1. Վաղարշապատ համայնքի Էջմիածին քաղաքի Ա. Բաբաջանյան /նախկին Զվարթնոց թաղամասի Մ. Մաշտոցի/ փողոցի թիվ 24 հասցեում գտնվող անշարժ գույքը բաժանել՝ համաձայն ներկայացված հողամասի բաժանման սխեմայի.

Առանձնացվող հատված 1-ին տրամադրել հասցե՝ Վաղարշապատ համայնք ք. Էջմիածին, Ա. Բաբաջանյան փողոց թիվ 24 բնակելի տուն,

Առանձնացվող հատված 2-ին տրամադրել հասցե՝ Վաղարշապատ համայնք ք. Էջմիածին, Ա. Բաբաջանյան փողոց թիվ 24/1 բնակելի տուն:

2. Սույն որոշումից ծագող իրավունքները ենթակա են պետական գրանցման:
3. Սույն որոշումը ուժի մեջ է մտնում ընդունմանը հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻՆ ՓՈԽԱՐԻՆՈՂ,

ԱՌԱՋԻՆ ՏԵՂԱԿԱԼ՝ Ա. ՊԵՏՐՈՍՅԱՆ

ՀՀ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶ

ՎԱՂԱՐՇԱՊԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

ՈՐՈՇՈՒՄ ԹԻՎ 13744

23 օգոստոսի 2024թ. ք.Էջմիածին

ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻՆ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 22-րդ և 24-րդ կետերով, 57-րդ հոդվածի 2-րդ մասով, ՀՀ Կառավարության 29.12.2005թ. թիվ 2387-Ն որոշման պահանջներով և քննարկելով Վաղարշապատ համայնքի Էջմիածին քաղաքի զանգվածի թիվ 161-162 տան բնակիչ՝ Լիլիյա Սուրենի Աբալյանի դիմումը.

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ

1. Վաղարշապատ համայնքի Էջմիածին քաղաքի Սասունցի Դավթի /նախկին Պետ տնկարան/ թաղամասում գտնվող անշարժ գույքին /հիմք՝ «Հայաստանի ազգային արխիվ» ՊՈԱԿ Արմավիրի մարզային մասնաճյուղի կողմից 01.07.2024թ. տրված՝ թիվ Ամ-1041 արխիվային քաղվածք և կադաստրի կոմիտեի կողմից հաստատված հասցեի հայտի քաղվածքի ծածկագիր՝ 04011DYNW7LX/ տրամադրել հասցե՝ Վաղարշապատ համայնք ք.Էջմիածին, Սասունցի Դավթի թաղամաս 3-րդ փողոց թիվ 52/1 հողամաս:
2. Սույն որոշումից ծագող իրավունքները ենթակա են պետական գրանցման:
3. Սույն որոշումը ուժի մեջ է մտնում ընդունմանը հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻՆ
ՓՈԽԱՐԻՆՈՂ, ԱՌԱՋԻՆ ՏԵՂԱԿԱԼ Ա.ՊԵՏՐՈՍՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ, ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶ ՎԱՂԱՐՇԱՊԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ
АРМЕНИЯ АРМАВИРСКИЙ МАРЗ ВАГАРШАПАТ МУНИЦИПАЛЬНОЕ СООБЩЕСТВО
REPUBLIC OF ARMENIA ARMAVIR MARZ MUNICIPALITY OF VAGHARSHAPAT
04440307

ՀՀ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶ

ՎԱՂԱՐՇԱՊԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

ՈՐՈՇՈՒՄ ԹԻՎ 13754

23 օգոստոս 2024թ. ք. Էջմիածին

ՀՀ ՊԱՏԳԱՄԱՎՈՐՆԵՐԻ ԷՋՄԻԱԾՆԻ ՇՐՋԱՆԱՅԻՆ ԽՈՐՀՐԴԻ ԳՈՐԾԱԴԻՐ ԿՈՄԻՏԵԻ 14.12.1992Թ. ԹԻՎ 22 ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Նորմատիվ իրավական ակտերի մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 33-34-րդ հոդվածների, <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ և 27.1 կետերի պահանջներով և հիմք ընդունելով Վաղարշապատ համայնքի Էջմիածին քաղաքի Արագածի զանգվածի թիվ 161-162 քոթեջի բնակիչ Լիլիյա Սուրենի Աբալյանի դիմումը, իր անձնագիրը, ծննդյան վկայականը և ամուսնության վկայականը:

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ

1. ՀՀ պատգամավորների Էջմիածնի շրջանային խորհրդի գործադիր կոմիտեի 14.12.1992թ. թիվ 22 որոշման մեջ կատարել հետևյալ փոփոխությունը.
<<Աբալյան Լիլյա>> բառերի փոխարեն կարդալ <<Աբալյան Լիլիյա Սուրենի>> բառերը:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻՆ ՓՈԽԱՐԻՆՈՂ
ԱՌԱՋԻՆ ՏԵՂԱԿԱԼ՝ Ա.ՊԵՏՐՈՍՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶ ՎԱՂԱՐՇԱՊԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ
РЕСПУБЛИКА АРМЕНИЯ АРМАВИРСКИЙ МАРЗ ВАГАРШАПАТСКОЕ СООБЩЕСТВО
REPUBLIC OF ARMENIA ARMAVIR MARZ VAGHARSHAPAT COMMUNITY
04440307

ՀՀ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶ

ՎԱՂԱՐՇԱՊԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

ՈՐՈՇՈՒՄ ԹԻՎ 1376-Ա

23 դեկտեմբեր 2024թ. ք.Էջմիածին

ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻՆ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 22-րդ և 24-րդ կետերով, 57-րդ հոդվածի 2-րդ մասով, ՀՀ Կառավարության 29.12.2005թ. թիվ 2387-Ն որոշման պահանջներով և քննարկելով Վաղարշապատ համայնքի Էջմիածին քաղաքի Պ. Պռոշյան փողոցի թիվ 18 տան բնակիչ՝ Հայկ Սեդրակի Բեյբությանի դիմումը.

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ

1. Վաղարշապատ համայնքի Էջմիածին քաղաքի 04-002-0390-0014 կադաստրային ծածկագրով անշարժ գույքին /հիմք՝ անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման վկայական թիվ 05032024-04-0021 տրված՝ 05.03.2023թ. և կադաստրի կոմիտեի կողմից հաստատված հասցեի հայտի քաղվածքի ծածկագիր՝ 04011PF8YEWH/ տրամադրել հասցե՝Վաղարշապատ համայնք, ք. Էջմիածին թիվ 3 հողամաս:
2. Սույն որոշումից ծագող իրավունքները ենթակա են պետական գրանցման:
3. Սույն որոշումը ուժի մեջ է մտնում ընդունմանը հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻՆ

ՓՈԽԱՐԻՆՈՂ, ԱՌԱՋԻՆ ՏԵՂԱԿԱԼ Ա.ՊԵՏՐՈՍՅԱՆ

ՀՀ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶ

ՎԱՂԱՐՇԱՊԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

ՈՐՈՇՈՒՄ ԹԻՎ 137/14

23 օգոստոսի 2024թ. ք.Էջմիածին

ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻՆ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 22-րդ և 24-րդ կետերով, 57-րդ հոդվածի 2-րդ մասով, ՀՀ Կառավարության 29.12.2005թ. թիվ 2387-Ն որոշման պահանջներով և քննարկելով Վաղարշապատ համայնքի Էջմիածին քաղաքի Արագածի զանգվածի թիվ 13 շենքի թիվ 18 բնակարանի բնակիչ՝ Անահիտ Գառնիկի Ավդալյանի դիմումը.

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ

1. Վաղարշապատ համայնքի Էջմիածին քաղաքի Արագածի զանգվածի թիվ 13 և 15 շենքերի միջև գտնվող անշարժ գույքին /հիմք՝ Արմավիրի մարզի նոտարական տարածքի նոտար Նառա Սամվելի Հովհաննիսյանի կողմից 06.11.2023թ. հաստատված թիվ 6910, 6911 գրանցամատյանով գրանցված ըստ օրենքի ժառանգության և սեփականության իրավունքի վկայագրեր և կադաստրի կոմիտեի կողմից հաստատված հասցեի հայտի քաղվածքի ծածկագիր՝ 04011F69GMAT/ տրամադրել հասցե՝ Վաղարշապատ համայնք ք.Էջմիածին, Արագածի զանգված թիվ 13/7 ավտոտնակ:
2. Սույն որոշումից ծագող իրավունքները ենթակա են պետական գրանցման:
3. Սույն որոշումը ուժի մեջ է մտնում ընդունմանը հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻՆ

ՓՈԽԱՐԻՆՈՂ, ԱՌԱՋԻՆ ՏԵՂԱԿԱԼ Ա. ՊԵՏՐՈՍՅԱՆ

ՀՀ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶ

ՎԱՂԱՐՇԱՊԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

ՈՐՈՇՈՒՄ ԹԻՎ 13784Ա

23 օգոստոսի 2024թ. ք.Էջմիածին

ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻՆ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 22-րդ և 24-րդ կետերով, 57-րդ հոդվածի 2-րդ մասով, ՀՀ Կառավարության 29.12.2005թ. թիվ 2387-Ն որոշման պահանջներով և քննարկելով Վաղարշապատ համայնքի Էջմիածին քաղաքի Ա. Խաչատրյան փողոցի թիվ 69 տան բնակիչ՝ Հեղինե Սերյոժայի Հովհաննիսյանի դիմումը.

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ

1. Վաղարշապատ համայնքի Էջմիածին քաղաքի Ա. Խաչատրյան փողոցում գտնվող անշարժ գույքին /հիմք՝ «Հայաստանի ազգային արխիվ» ՊՈԱԿ Արմավիրի մարզային մասնաճյուղի կողմից 20.02.2024թ. տրված՝ թիվ Ամ-260 արխիվային քաղվածք և կադաստրի կոմիտեի կողմից հաստատված հասցեի հայտի քաղվածքի ծածկագիր՝ 04011VKWWP5A/ տրամադրել հասցե՝ Վաղարշապատ համայնք ք.Էջմիածին, Ա. Խաչատրյան փողոց թիվ 69 բնակելի տուն:
2. Սույն որոշումից ծագող իրավունքները ենթակա են պետական գրանցման:
3. Սույն որոշումը ուժի մեջ է մտնում ընդունմանը հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ
ՓՈԽԱՐԻՆՈՂ, ԱՌԱՋԻՆ ՏԵՂԱԿԱԼ Ա. ՊԵՏՐՈՍՅԱՆ

ՀՀ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶ
ՎԱՂԱՐՇԱՊԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

ՈՐՈՇՈՒՄ ԹԻՎ 1379Ա

23 օգոստոսի 2024թ. ք.Էջմիածին

ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻ ԲԱԺԱՆՄԱՆ ԵՎ ՀԱՍՑԵԱՎՈՐՄԱՆ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 22-րդ և 24-րդ կետերով, 57-րդ հոդվածի 2-րդ մասով, ՀՀ Կառավարության 29.12.2005թ. թիվ 2387–Ն որոշման պահանջներով և քննարկելով Վաղարշապատ համայնքի Էջմիածին քաղաքի, Արագածի զանգվածի թիվ 4 շենքի թիվ 13 բնակարանի բնակիչ՝ Սոնա Հայկի Ասատրյանի դիմումը իրեն պատկանող անշարժ գույքը բաժանելու մասին /հիմք՝ անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման վկայական թիվ 22072024-04-0010 տրված՝ 22.07.2024թ., «Կարեն Մաչանյան» ԱՁ-ի /որակավորման վկայական թիվ 0244/ կողմից 05.08.2024թ. կազմված հատակագիծ և կադաստրի կոմիտեի կողմից հաստատված հասցեի հայտի քաղվածքի ծածկագրեր՝ 04011MWCFPLN, 04011XRZRN8U/.

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ

1. Վաղարշապատ համայնքի Էջմիածին քաղաքի Մ. Մանուշյան փողոցի թիվ 0/1 հասցեում գտնվող անշարժ գույքը բաժանել՝ համաձայն ներկայացված հողամասի բաժանման սխեմայի.

Առանձնացվող հատված 1-ին տրամադրել հասցե՝ Վաղարշապատ համայնք ք. Էջմիածին, Մ. Մանուշյան փողոց թիվ 2/15 հողամաս,

Առանձնացվող հատված 2-ին տրամադրել հասցե՝ Վաղարշապատ համայնք ք. Էջմիածին, Մ. Մանուշյան փողոց թիվ 2/16 հողամաս:

2. Սույն որոշումից ծագող իրավունքները ենթակա են պետական գրանցման:
3. Սույն որոշումը ուժի մեջ է մտնում ընդունմանը հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻՆ

ՓՈԽԱՐԻՆՈՂ, ԱՌԱՋԻՆ ՏԵՂԱԿԱԼ Ա. ՊԵՏՐՈՍՅԱՆ

ՀՀ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶ

ՎԱՂԱՐՇԱՊԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

ՈՐՈՇՈՒՄ ԹԻՎ 13804

23 օգոստոսի 2024թ. ք.Էջմիածին

ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԵՐԸ ՄԻԱՎՈՐԵԼՈՒ ԵՎ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 22-րդ և 24-րդ կետերով, 57-րդ հոդվածի 2-րդ մասով, ՀՀ Կառավարության 29.12.2005թ. թիվ 2387-Ն որոշման պահանջներով և քննարկելով Վաղարշապատ համայնքի Էջմիածին քաղաքի, Արագածի զանգվածի թիվ 1/1 շենքի թիվ 32 բնակարանի բնակիչ՝ Հայկանուշ Հարությունի Բալջյանի դիմումը.

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ

1. Վաղարշապատ համայնքի Էջմիածին քաղաքի Ա. Խաչատրյան փողոցի թիվ 25 և Ա. Խաչատրյան փողոցի թիվ 25/1 հասցեների անշարժ գույքերը /հիմք՝ անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման վկայականներ թիվ 04082022-04-0038 տրված՝ 04.08.2022թ., թիվ 28062024-04-0038 տրված՝ 25.06.2024թ., Արմավիրի մարզի նոտարական տարածքի նոտար Նառա Սամվելի Հովհաննիսյանի կողմից 16.08.2024թ. հաստատված թիվ 5920 գրանցամատյանով գրանցված անշարժ գույքի առուվաճառքի պայմանագիր և կադաստրի կոմիտեի կողմից հաստատված հասցեի հայտի քաղվածքի ծածկագիր՝ 04011DCU43UF/ միավորել և տրամադրել մեկ ընդհանուր հասցե՝ Վաղարշապատ համայնք ք. Էջմիածին, Ա. Խաչատրյան փողոցի թիվ 25 բնակելի տուն:
2. Սույն որոշումից ծագող իրավունքները ենթակա են պետական գրանցման:
3. Սույն որոշումը ուժի մեջ է մտնում ընդունմանը հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻՆ ՓՈԽԱՐԻՆՈՂ,

ԱՌԱՋԻՆ ՏԵՂԱԿԱԼ՝ Ա. ՊԵՏՐՈՍՅԱՆ

ՀՀ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶ
ՎԱՂԱՐՇԱՊԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ

ՈՐՈՇՈՒՄ ԹԻՎ 13814

26 դեկտեմբեր 2024թ. ք. Էջմիածին

ՎԱՂԱՐՇԱՊԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ 05.06.2024Թ. ԹԻՎ 855Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 33-34-րդ հոդվածների, «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետի և 57-րդ հոդվածի 2-րդ մասի պահանջներով.

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ

1. Վաղարշապատ համայնքի ղեկավարի 05.06.2024թ. թիվ 855Ա որոշման մեջ կատարել հետևյալ փոփոխությունը.

եզրափակիչ մասում նշված «804 337/ ութ հարյուր չորս հազար երեք հարյուր երեսունյոթ/» բառերի փոխարեն կարդալ «1 695 309/ մեկ միլիոն վեց հարյուր իննսունհինգ հազար երեք հարյուր ինը» բառերը:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունմանը հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻՆ
ՓՈԽԱՐԻՆՈՂ, ԱՌԱՋԻՆ ՏԵՂԱԿԱԼ Ա.ՊԵՏՐՈՍՅԱՆ

ՀՀ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶ
ՎԱՂԱՐՇԱՊԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

ՈՐՈՇՈՒՄ ԹԻՎ 1382-Ա

26 օգոստոսի 2024թ. ք. Էջմիածին

ՎԱՂԱՐՇԱՊԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ԷՋՄԻԱԾԻՆ ՔԱՂԱՔԻ ՍՈՒՐԲ Մ.ԽՈՐԵՆԱՑԻ ՓՈՂՈՑԻ ԹԻՎ 48 ՀԱՍՑԵՈՒՄ ԳՏՆՎՈՂ ՀՈՂԱՄԱՍԻ ԳՈՐԾԱՌՆԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ ՓՈՓՈԽԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Վաղարշապատ համայնքի Էջմիածին քաղաքի Մայակովսկու փողոցի թիվ 4 տան բնակիչ Սամվել Երվանդի Հակոբյանը դիմել է Վաղարշապատի համայնքապետարան իրեն սեփականության իրավունքով պատկանող/ հիմք՝ 17.05.2004թ. տրված թիվ 1241372 սեփականության իրավունքի վկայական / Վաղարշապատ համայնքի Էջմիածին քաղաքի Սուրբ Մ.Խորենացու փողոցի թիվ 48 հասցեում գտնվող 0.03հա մակերեսով հողամասից 0.00062հա մակերեսով մասի գործառնական նշանակությունը այլ հողերից հասարակական կառուցապատման փոփոխելու խնդրանքով:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով, «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, 57-րդ հոդվածի 2-րդ մասով և ՀՀ կառավարության 29.12.2011թ. թիվ 1920-ն որոշման 24-րդ կետի 3-րդ ենթակետի պահանջներով և հիմք ընդունելով ՀՀ կադաստրի կոմիտեի կողմից գույքի նկատմամբ իրավունքի /սահմանափակման/ պետական գրանցման վարույթը կասեցնելու մասին 05.03.2024թ. թիվ Կ-05032024-04-0096 որոշումը.

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ

1. Վաղարշապատ համայնքի Էջմիածին քաղաքի Սուրբ Մ.Խորենացու փողոցի թիվ 48 հասցեում գտնվող 0.03հա մակերեսով հողամասից 0.00062հա մակերեսով մասի գործառնական նշանակությունը այլ հողերից փոփոխել հասարակական կառուցապատման գործառնական նշանակության:
2. Սույն որոշումից ծագող իրավունքները ենթակա են պետական գրանցման:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունմանը հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻՆ
ՓՈԽԱՐԻՆՈՂ,ԱՌԱՋԻՆ ՏԵՂԱԿԱԼ Ա.ԳԵՏՐՈՍՅԱՆ

ՀՀ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶ

ՎԱՂԱՐՇԱՊԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

ՈՐՈՇՈՒՄ ԹԻՎ 13834

26 օգոստոսի 2024թ. ք. Էջմիածին

ԻՐԱՎՈՒՆՔ ՀԱՍՏԱՏՈՂ ՓԱՍՏԱԹՂԹԵՐԸ ՉՊԱՀՊԱՆՎԱԾ ԲՆԱԿԵԼԻ ՏՈՒՆԸ ԵՎ ԲՆԱԿԵԼԻ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ՕԺԱՆԴԱԿ ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԷՄՄԱ ՍԱՐԳՍԻ ՄԱՆՈՒԿՅԱՆԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՄԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Քննարկելով Վաղարշապատ համայնքի Էջմիածին քաղաքի Սպարապետ Վազգեն Սարգսյան փողոցի 24ա տան բնակիչ՝ Էմմա Սարգսի Մանուկյանի դիմումը՝ պարզվեց, որ սեփականության իրավունքով իրեն պատկանող /հիմք՝ Վաղարշապատ նոտարական տարածքի նոտար Ալեք Ավետյանի կողմից 26.12.2012թ. հաստատված թիվ 7327 սեղանամատյանով գրանցված ըստ օրենքի ժառանգության իրավունքի վկայագիր և «Կարեն Մաչանյան» ԱՁ-ի /որակավորման վկայական թիվ 0244/ կողմից 31.07.2024թ. կազմված հատակագիծ/, Վաղարշապատ համայնքի Էջմիածին քաղաքի Սպարապետ Վազգեն Սարգսյան փողոցի 24ա հասցեում գտնվող 0.0305հա մակերեսով փաստացի առկա սահմանազատված բնակավայրերի նպատակային նշանակության բնակելի կառուցապատման գործառնական նշանակության հողամասում գտնվող բնակելի տունը և բնակելի նշանակության օժանդակ շինությունները, որոնց նկատմամբ չեն պահպանվել սահմանված կարգով տրամադրված քաղաքաշինական գործունեություն իրականացնելու փաստաթղթերը, կառուցվել են մինչև 2001թ մայիսի 15-ը, ինչպես նաև դրանք չեն գտնվում ՀՀ հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված հողամասերի ցանկում, այդ թվում՝ ինժեներատրանսպորտային օբյեկտների օտարման գոտիներում, չեն հակասում քաղաքաշինական նորմերին և չեն առաջացնում սերվիտուտ:

Հաշվի առնելով վերը նշվածը, հիմք ընդունելով, որ անշարժ գույքը բավարարում է 10.06.2008թ. ընդունված ՀՕ-117-Ն օրենքի 1-ին հոդվածով նախատեսված պայմաններին և ղեկավարվելով «Իրավունք հաստատող փաստաթղթերը չպահպանված անհատական բնակելի տների կարգավիճակի մասին» ՀՀ օրենքով և «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ և 57-րդ հոդվածի 2-րդ կետի կետի պահանջներով.

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ

1. Վաղարշապատ համայնքի Էջմիածին քաղաքի Սպարապետ Վազգեն Սարգսյան փողոցի 24ա հասցեում գտնվող փաստացի առկա սահմանազատված բնակավայրերի նպատակային նշանակության բնակելի կառուցապատման գործառնական նշանակության հողամասում մինչև 15.05.2001թ. կառուցված, 80% և ավելի ավարտվածության աստիճան ունեցող բնակելի տունը և բնակելի նշանակության օժանդակ շինությունները համարել Էմմա Սարգսի Մանուկյանի /ծնված՝ 22.07.1949թ./ սեփականությունը:
2. Սույն որոշումից ծագող իրավունքները ենթակա են պետական գրանցման:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունմանը հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ

ՓՈԽԱՐԻՆՈՂ, ԱՌԱՋԻՆ ՏԵՂԱԿԱԼ Ա. ՊԵՏՐՈՍՅԱՆ

ՀՀ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶ

ՎԱՂԱՐՇԱՊԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

ՈՐՈՇՈՒՄ ԹԻՎ 1384Ա

26 դեկտեմբեր 2024թ. ք.Էջմիածին

ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻՆ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 22-րդ և 24-րդ կետերով, 57-րդ հոդվածի 2-րդ մասով, ՀՀ Կառավարության 29.12.2005թ. թիվ 2387-Ն որոշման պահանջներով և քննարկելով Վաղարշապատ համայնքի Էջմիածին քաղաքի Սպարապետ Վազգեն Սարգսյան փողոցի 24ա տան բնակիչ՝ Էմմա Սարգսի Մանուկյանի դիմումը.

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ

1. Վաղարշապատ համայնքի Էջմիածին քաղաքի Սպարապետ Վազգեն Սարգսյան փողոցի 24ա հասցեում գտնվող անշարժ գույքին /հիմք՝ Վաղարշապատ նոտարական տարածքի նոտար Ալեք Ավետյանի կողմից 26.12.2012թ. հաստատված թիվ 7327 սեղանամատյանով գրանցված ըստ օրենքի ժառանգության իրավունքի վկայագիր և կադաստրի կոմիտեի կողմից հաստատված հասցեի հայտի քաղվածքի ծածկագիր՝ 04011JUSTHHL/ տրամադրել հասցե՝ Վաղարշապատ համայնք ք.Էջմիածին, Վազգեն Սարգսյան փողոց թիվ 24/10 բնակելի տուն:
2. Սույն որոշումից ծագող իրավունքները ենթակա են պետական գրանցման:
3. Սույն որոշումը ուժի մեջ է մտնում ընդունմանը հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻՆ

ՓՈԽԱՐԻՆՈՂ, ԱՌԱՋԻՆ ՏԵՂԱԿԱԼ Ա. ՊԵՏՐՈՍՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶ ՎԱՂԱՐՇԱՊԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ ՂԵԿԱՎԱՐ
РЕСПУБЛИКА АРМЕНИЯ АРМАВИРСКИЙ МАРЗ МУНИЦИПАЛИТЕТ ВАГАРШАПАТСКОЙ ОБЩИНЫ ГЛАВА АДМИНИСТРАЦИИ
04440307

ՀՀ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶ

ՎԱՂԱՐՇԱՊԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ

ՈՐՈՇՈՒՄ ԹԻՎ 1385Ա

26 դեկտեմբեր 2024թ.ք. Էջմիածին

ՎԱՂԱՐՇԱՊԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ 08.08.2024Թ. ԹԻՎ 1275Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 33-34-րդ հոդվածների, «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետի և 57-րդ հոդվածի 2-րդ մասի պահանջներով պահանջներով.

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ

1. Վաղարշապատ համայնքի ղեկավարի 08.08.2024թ. « Անշարժ գույքին հասցե տրամադրելու մասին» թիվ 1275Ա որոշման մեջ կատարել հետևյալ փոփոխությունները.

եզրափակիչ մասում նշված «04022X9SX22B» բառի փոխարեն կարդալ «04022FKVMH8E» բառը և «հիմք՝ անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման վկայական թիվ 17122019-04-0081 տրված՝ 17.12.2019թ.» բառերի փոխարեն կարդալ «հիմք՝ սեփականության իրավունքի վկայական թիվ 2493679 տրված՝ 06.11.2007թ., Արմավիրի մարզի նոտարական տարածքի նոտար Տարոն Վրեժի Գրիգորյանի կողմից 10.12.2019թ. հաստատված թիվ 7797 գրանցամատյանով գրանցված ըստ օրենքի ժառանգության իրավունքի վկայագիր » բառերը.

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻՆ

ՓՈԽԱՐԻՆՈՂ, ԱՌԱՋԻՆ ՏԵՂԱԿԱԼ Ա. ՊԵՏՐՈՍՅԱՆ

ՀՀ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶ
ՎԱՂԱՐՇԱՊԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

ՈՐՈՇՈՒՄ ԹԻՎ 1386Ա

26 դեկտեմբեր 2024թ. ք.Էջմիածին

ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻ ԲԱԺԱՆՄԱՆ ԵՎ ՀԱՍՑԵԱՎՈՐՄԱՆ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 22-րդ և 24-րդ կետերով, 57-րդ հոդվածի 2-րդ մասով, ՀՀ Կառավարության 29.12.2005թ. թիվ 2387–Ն որոշման պահանջներով և քննարկելով Վաղարշապատ համայնքի Էջմիածին քաղաքի, Լ. Ազգալդյան փողոցի թիվ 1 շենքի թիվ 34 բնակարանի բնակիչ՝ Կոնստանտին Աշոտի Բուդաղյանի դիմումը իրեն պատկանող անշարժ գույքը բաժանելու մասին /հիմք՝ անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման վկայական թիվ 03012024-04-0058 տրված՝ 03.01.2024թ., «Կարեն Մաչանյան» ԱՁ-ի /որակավորման վկայական թիվ 0244/ կողմից 15.08.2024թ. կազմված հատակագիծ և կադաստրի կոմիտեի կողմից հաստատված հասցեի հայտի քաղվածքի ծածկագրեր՝ 04011LRBEXS7, 04011JWCT6UJ/.

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ

1. Վաղարշապատ համայնքի Էջմիածին քաղաքի Լ. Ազգալդյան /նախկին Վ. Կոստանյան/ փողոցի թիվ 2/1 հասցեում գտնվող անշարժ գույքը բաժանել՝ համաձայն ներկայացված հողամասի բաժանման սխեմայի.

Առանձնացվող հատված 1-ին տրամադրել հասցե՝ Վաղարշապատ համայնք ք. Էջմիածին, Լ, Ազգալդյան փողոց թիվ 2/1 առնտրի սրահ:

Առանձնացվող հատված 2-ին տրամադրել հասցե՝ Վաղարշապատ համայնք ք. Էջմիածին, Լ, Ազգալդյան փողոց թիվ 2/8 առնտրի սրահ:

2. Սույն որոշումից ծագող իրավունքները ենթակա են պետական գրանցման:
3. Սույն որոշումը ուժի մեջ է մտնում ընդունմանը հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻՆ ՓՈԽԱՐԻՆՈՂ

ԱՌԱՋԻՆ ՏԵՂԱԿԱԼ Ա. ՊԵՏՐՈՍՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶ ՎԱՂԱՐՇԱՊԱՏ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՎԱՐՉԱՊԵՏԱՐԱՆ
АРМАВИРСКИЙ МАРЗ ВАГАРШАПАТСКОЕ ТЕРРИТОРИАЛЬНОЕ УПРАВЛЕНИЕ
REPUBLIC OF ARMENIA ARMAVIR MARZ MUNICIPALITY VAGHARSHAPAT
04440307

ՀՀ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶ
ՎԱՂԱՐՇԱՊԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

ՈՐՈՇՈՒՄ ԹԻՎ 138 ԼԿ

26 դեկտեմբեր 2024թ. ք. Էջմիածին

ՎԱՂԱՐՇԱՊԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ՈՍԿԵՀԱՏ ԳՅՈՒՂԻ 27-ՐԴ ՓՈՂՈՑԻ ԹԻՎ 44 ՀԱՍՑԵՈՒՄ ԻՆՔՆԱԿԱՄ ԿԱՌՈՒՑՎԱԾ ԲՆԱԿԵԼԻ ՏՈՒՆԸ ԵՎ ՕԺԱՆԴԱԿ ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՕՐԻՆԱԿԱՆԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Քննարկելով Երևան քաղաքի Եղիշե Թադևոսյանի փողոցի թիվ 5 շենքի թիվ 26 բնակարանի բնակիչ Գեղամ Սուրենի Համբարձումյանի դիմումը՝ պարզվեց, որ վերջինս դիմել է Վաղարշապատի համայնքապետարան՝ իրեն սեփականության իրավունքով պատկանող / հիմք՝ 25.06.2014թ. տրված թիվ 25062014-04-0029 անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման վկայական, «Սարգիս Թամազյան Ռոբերտի» ԱՁ-ի /որակավորման վկայական թիվ 0368/ կողմից 27.12.2023թ. կազմված հատակագիծ, Կադաստրի կոմիտեում հաշվառման ծածկագիր՝ 20232PLMFL/ Վաղարշապատ համայնքի Ոսկեհատ գյուղի 27-րդ փողոցի թիվ 44 հասցեում գտնվող 0.096896հա մակերեսով բնակավայրերի նպատակային նշանակության, բնակելի կառուցապատման գործառնական նշանակության հողամասում, ինքնակամ կառուցված ընդհանուր 131.85քմ /արտաքին 131.85քմ, ներքին 114.78քմ/ մակերեսով բնակելի տունը և օժանդակ շինությունները օրինականացնելու խնդրանքով:

Հիմք ընդունելով վերոգրյալը և ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական օրենսգրքում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին 24.12.2021թ. ՀՕ-397-Ն օրենքի 2-րդ հոդվածով, «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, 57-րդ հոդվածի 2-րդ մասով, ՀՀ Կառավարության 18.05.2006թ. թիվ 912-Ն որոշման պահանջներով և հաշվի առնելով, որ կառույցը կառուցված չէ քաղաքաշինական նորմերի ու կանոնների էական խախտումներով, կառույցի պահպանումը չի խախտում այլ անձանց իրավունքներն ու օրենքով պահպանվող շահերը և վտանգ չի սպառնում քաղաքացիների կյանքին ու առողջությանը, կառուցված չէ ինժեներատրանսպորտային օբյեկտների օտարման և անվտանգության գոտիներում, չի առաջացնում հարկաղիր սերվիտուտ պահանջելու իրավունք և չի գտնվում ՀՀ հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված հողամասերի ցանկում.

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ

1. Վաղարշապատ համայնքի Ոսկեհատ գյուղի 27-րդ փողոցի թիվ 44 հասցեում գտնվող 0.096896հա մակերեսով բնակավայրերի նպատակային նշանակության, բնակելի կառուցապատման գործառնական նշանակության հողամասում, ինքնակամ կառուցված ընդհանուր 131.85քմ /արտաքին 131.85քմ, ներքին 114.78քմ/ մակերեսով բնակելի տունը և օժանդակ շինությունները ճանաչել օրինական, որի համար սահմանված 159 407 / հարյուր հիսունինը հազար չորս հարյուր յոթ / ՀՀ դրամ վճարը սույն որոշման ընդունման օրվանից 60-օրյա ժամկետում չմուծելու դեպքում սույն որոշումը համարել ուժը կորցրած
2. Սույն որոշումից ծագող իրավունքները ենթակա են պետական գրանցման:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում վարույթի մասնակցին իրազեկելու հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻՆ
ՓՈԽԱՐԻՆՈՂ, ԱՌԱՋԻՆ ՏԵՂԱԿԱԼ Ա.ՊԵՏՐՈՍՅԱՆ

ՀՀ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶ
ՎԱՂԱՐՇԱՊԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

ՈՐՈՇՈՒՄ ԹԻՎ 1388Կ

26 օգոստոս 2024թ. ք. Էջմիածին

ՎԱՂԱՐՇԱՊԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ՈՍԿԵՀԱՏ ԳՅՈՒՂԻ ԲԱՐԵԿԱՄՈՒԹՅԱՆ ՓՈՂՈՑԻ ԹԻՎ 169 ՀԱՍՑԵՈՒՄ ԻՆՔՆԱԿԱՄ ԿԱՌՈՒՑՎԱԾ ԲՆԱԿԵԼԻ ՏՈՒՆԸ ԵՎ ՕԺԱՆԴԱԿ ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՕՐԻՆԱԿԱՆԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Քննարկելով Վաղարշապատ համայնքի Ոսկեհատ գյուղի Բարեկամության փողոցի թիվ 89 տան բնակիչ՝ Վաչագան Արսենի Առաքելյանի դիմումը՝ պարզվեց, որ վերջինս դիմել է Վաղարշապատի համայնքապետարան՝ իրեն, Լուսինե Վաչագանի Առաքելյանին, Երվանդ Վաչագանի Առաքելյանին և Սաթիկ Վաչագանի Առաքելյանին սեփականության իրավունքով պատկանող /հիմք՝18.09.2003թ. տրված թիվ 1674668 սեփականության վկայական, Արմավիրի մարզի նոտարական տարածքի նոտար Տարոն Վրեժի Գրիգորյանի կողմից 29.07.2024թ. հաստատված թիվ 4870 գրանցամատյանով գրանցված ըստ օրենքի ժառանգության իրավունքի վկայագիր, «Սևան Թովմասյան» ԱՁ-ի /որակավորման վկայական թիվ 0296/ կողմից 15.11.2023թ. կազմված հատակագիծ, Կադաստրի կոմիտեում հաշվառման ծածկագիր՝ 2023KXFVYF և Կադաստրի կոմիտեի կողմից հաստատված հասցեի հայտի քաղվածքի ծածկագիր՝ 04999QSLRGYS / Վաղարշապատ համայնքի Ոսկեհատ գյուղի Բարեկամության փողոցի թիվ 169 հասցեում գտնվող 0.1737հա մակերեսով բնակավայրերի նպատակային նշանակության, բնակելի կառուցապատման գործառնական նշանակության հողամասում, ինքնակամ կառուցված ընդհանուր 87.9քմ /արտաքին 87.9քմ, ներքին 77.4քմ/ մակերեսով բնակելի տունը և օժանդակ շինությունները օրինականացնելու խնդրանքով:

Հիմք ընդունելով վերոգրյալը և ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական օրենսգրքում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին 24.12.2021թ. ՀՕ-397-Ն օրենքի 2-րդ հոդվածով, «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, 57-րդ հոդվածի 2-րդ մասով, ՀՀ Կառավարության 18.05.2006թ. թիվ 912-Ն որոշման պահանջներով և հաշվի առնելով, որ կառույցը կառուցված չէ քաղաքաշինական նորմերի ու կանոնների էական խախտումներով, կառույցի պահպանումը չի խախտում այլ անձանց իրավունքներն ու օրենքով պահպանվող շահերը և վտանգ չի սպառնում քաղաքացիների կյանքին ու առողջությանը, կառուցված չէ ինժեներատրանսպորտային օբյեկտների օտարման և անվտանգության գոտիներում, չի առաջացնում հարկադիր սերվիտուտ պահանջելու իրավունք և չի գտնվում ՀՀ հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված հողամասերի ցանկում.

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ

1. Վաղարշապատ համայնքի Ոսկեհատ գյուղի Բարեկամության փողոցի թիվ 169 հասցեում գտնվող 0.1737հա մակերեսով բնակավայրերի նպատակային նշանակության, բնակելի կառուցապատման գործառնական նշանակության հողամասում, ինքնակամ կառուցված ընդհանուր 87.9քմ /արտաքին 87.9քմ, ներքին 77.4քմ/ մակերեսով բնակելի տունը և օժանդակ շինությունները ճանաչել օրինական, որի համար սահմանված 106 272 / հարյուր վեց հազար երկու հարյուր յոթանասուներկու/ ՀՀ դրամ վճարը սույն որոշման ընդունման օրվանից 60-օրյա ժամկետում չմուծելու դեպքում սույն որոշումը համարել ուժը կորցրած
2. Սույն որոշումից ծագող իրավունքները ենթակա են պետական գրանցման:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում վարույթի մասնակցին իրազեկելու հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻՆ
ՓՈԽԱՐԻՆՈՂ, ԱՌԱՋԻՆ ՏԵՂԱԿԱԼ Ա.ՊԵՏՐՈՍՅԱՆ

ՀՀ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶ

ՎԱՂԱՐՇԱՊԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

ՈՐՈՇՈՒՄ ԹԻՎ 13894Ա

26 օգոստոսի 2024թ. ք.Էջմիածին

ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻՆ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 22-րդ և 24-րդ կետերով, 57-րդ հոդվածի 2-րդ մասով, ՀՀ Կառավարության 29.12.2005թ. թիվ 2387-Ն որոշման պահանջներով և քննարկելով Վաղարշապատ համայնքի Ոսկեհատ գյուղի Բարեկամության փողոցի թիվ 89 տան բնակիչ՝ Վաչագան Արսենի Առաքելյանի դիմումը.

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ

1. Վաղարշապատ համայնքի Ոսկեհատ գյուղի Բարեկամության փողոցում գտնվող անշարժ գույքին /հիմք՝ սեփականության իրավունքի վկայական թիվ 1674668 տրված՝ 18.09.2003թ., Արմավիրի մարզի նոտարական տարածքի նոտար Տարոն Վրեժի Գրիգորյանի կողմից 29.07.2024թ. հաստատված թիվ 4870 գրանցամատյանով գրանցված ըստ օրենքի ժառանգության իրավունքի վկայագիր և կադաստրի կոմիտեի կողմից հաստատված հասցեի հայտի քաղվածքի ծածկագիր՝ 04999QSLRGYS/ տրամադրել հասցե՝ Վաղարշապատ համայնք , գյուղ Ոսկեհատ, Բարեկամության փողոց թիվ 169 բնակելի տուն:
2. Սույն որոշումից ծագող իրավունքները ենթակա են պետական գրանցման:
3. Սույն որոշումը ուժի մեջ է մտնում ընդունմանը հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻՆ

ՓՈԽԱՐԻՆՈՂ, ԱՌԱՋԻՆ ՏԵՂԱԿԱԼ Ա.ՊԵՏՐՈՍՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶ ՎԱՂԱՐՇԱՊԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ
РЕСПУБЛИКА АРМЕНИЯ АРМАВИРСКИЙ МАРЗ ГЛАВА ВАГАРШАПАТСКОЙ ОБЩИНЫ
REPUBLIC OF ARMENIA ARMAVIR MARZ MUNICIPALITY OF VAGHARSHAPAT
04440307

ՀՀ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶ
ՎԱՂԱՐՇԱՊԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

ՈՐՈՇՈՒՄ ԹԻՎ 1390Ա

26 դեկտեմբեր 2024թ. ք. Էջմիածին

ՎԱՂԱՐՇԱՊԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ԷՋՄԻԱԾԻՆ ՔԱՂԱՔԻ ԱՐԱԳԱԾԻ 2-ՐԴ ԶԱՆԳՎԱԾԻ ԹԻՎ 272 ՀԱՍՑԵՈՒՄ ԻՆՔՆԱԿԱՄ ԿԱՌՈՒՑՎԱԾ ԲՆԱԿԵԼԻ ՏՈՒՆԸ, ԱՎՏՈՏՆԱԿԸ ԵՎ ՊԱՐԻՍՊԸ ՕՐԻՆԱԿԱՆԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Քննարկելով Վաղարշապատ համայնքի Էջմիածին քաղաքի Լերմոնտովի փողոցի թիվ 23 տան բնակիչ Գրիգոր Հրանտի Առաքելյանի դիմումը՝ պարզվեց, որ վերջինս դիմել է Վաղարշապատի համայնքապետարան՝ իրեն սեփականության իրավունքով պատկանող /հիմք 19.10.2006թ. տրված թիվ 2169160 սեփականության իրավունքի վկայական, «Աստղիկ Մանուկյան» ԱՁ-ի /որակավորման վկայական թիվ 096/ կողմից 25.12.2023թ. կազմված հատակագիծ, Կադաստրի կոմիտեում հաշվառման ծածկագիր՝ 2023ZV4N3L / Վաղարշապատ համայնքի Էջմիածին քաղաքի Արագածի 2-րդ զանգվածի թիվ 272 հասցեում գտնվող 0.0532հա մակերեսով բնակավայրերի նպատակային նշանակության, բնակելի կառուցապատման գործառնական նշանակության հողամասում, ինքնակամ կառուցված ընդհանուր 110.6քմ /110.6քմ արտաքին, ներքին 89.9քմ / մակերեսով բնակելի տունը, ավտոտնակը և պարիսպը օրինականացնելու խնդրանքով:

